

የሀገሪቱ ተያዥ

ՄԱԿԱՀԱՐ ԳՈՐԿՈՒ

Նիբուռում էր ծովը։
Անհան, վլթխարի, անծայր ափերի եղերքով պատաճ,
հծծում էր լոկիկ. քնել էր արդէս և կիսում էր անդորր լուա-
նի կապուտակի լուսի մէջ կորած ճղվին էր տալիս։ Թաւշա-
մուն—փափուկ, սև սաթ խաւերով, անստեղ նա հեռուում հա-
րաւ երկնքի կապուտակի հատ փարուել, թաղուել էր խոր,
սինդ նիբուն մէջ, և իւր պարզ ծոցում բամբակի քուլա թա-
փանցկէն ամպերի պատկերն էր ցոլցլում, որ անշարժ կէ-
ցած չէին էլ ծածկում ոսկեշաղ աստղերի հրաշալի կերտուածք։
Կարծես երկինքը ղեռ էլ աւելի թեքում էր ծովին, գիտնալ
ցանկալով թէ Բնէ են հծծում մշտախօս ալիք, որոնք ա-
փերին հանդարտ, քնէած ծափին են տալիս։

Ծառախիտ լեռներ, ճոխ բուսականութիւն, թեքուած զէպ գետին հիւսիս-արևմտեան քամու չնորդիւ, զօրեղ զծերով իրենց կատարներն անհուն կապուտի անապատն ուղղած, մեղմուած-փափկանում էին հարաւի դիշերալին մեղկ, քնքաբար փարուող շամանդ խոնաւի փաղաքուչի. մէջ, որտեղ իրենց չոր, խիստ դիմազծերն էին սփողում, կլորիլ աշխատում։ Լեռներն վեհապանն—մտածկու էին. Կանաչաւուն, վերտալեաց ճոխ կատար պլուած լեռներից դէպի վար իշած թանձը ստուերի մէջ, կարծես թէ անհուն ջանք էին գործ դընում, որ մեռցնեն—պահեն ախ միակ շարժումն, և ալիքների մշտախօս ծփանք. Ա' թէ փրփուրի անվերջ հեծեծանք խեղղեն, սպանեն,—մի խօսքով բոլոր ախ ձախն ու ծպտուն, որ տքնում են խախտել դեռ ևս լեռների սէգ կատարների լեռն թագնուած, արծաթափալլ լուսնի կապուտ շողերի սըրբաղան անդորր։

բաղաս ամսությունները... հանդարտ հձեռւմ է Նախագիր-Ռահման-Հայոց քաջականության և պահպանի համար կազմակերպության կողմէն, որ մի իմաստուն ծերութէ էր, կալտառ, միշտ մենամաղձկէկ ու բարձր հասակով, ալիքն սպիտակ, արևառ դէմքով, հիւծուած, չոփ դարձած։ Մի տեղ միասին պառկած ենք հսկալ ժայռը քարի տակի աւզուտի վրայ։ ալդ մալոն ահապին, աղջական սարից

պոկուել էր, ընկել, ստուերով փաթառւել, մամուով պինդ ծածկուել և նոյնքան տիտոր, մռավ տեսք առել, որքան ազգա. կան հինաւուրց սարը. Նորա այն կողքին, որ ծովն էր նալում, ալիքներն սծել, կուտակել էին տիզմ ու ջրխոսեր, որոնցով կախկիւուած մնձ, հսկալ ժալոք, կարծես, թէ ծովը լեռներից բաժնող նեղլիկ, աւազուտ շերտի հետ ամուր կապել—կցել էր. Մեր վառ խարօկի լուսաւոր բացը պատել էր նորան և լուսաւորում էր սարին դարձրած երեսը. լանկարծ բոցն առկագում, եղում իջնում էր և ծերուկ ժալոքի խոր խոր ակոսած դաժան դեերին ստուերներ ձգում, կարծես խոհերի և մտորմունքի անդունդն էր իջել և զգացումների ծով համակուել...

Հէնց մեր նոր որսած ձկներն շտապով ածել ենք կաթսան, և ծեր Ռահիմի հետ ձկնաթան եփում. երկուս էլ ընկղմուած ենք այն բացառիկ հողեմաց, տարտամ վիճակի մէջ, երբ ամեն ինչ ալնչափ երազուն, տեսլական է թւում, որ ամեն մէկին իւր մէջ համարձակ խոր թափանցելու իրաւունք է տալիս, երբ մեր սիրտն այնքան պարզ, լսուակ է, թեթև չ չունինք ուրիշ ցանկութիւն, բացի խորեւու միակ տենչանքից,

Եւ ծովը շուրում, փարւում է ափին, իսկ կոհակներն ալնքան անուշ—մելամաղձ են հձնում, միշում, կարծես խարովկին փարուիլ, տաքնալու խնդիր են զնում. Նըրեմի ընդհանուր ներդաշնակ ծովիք խանզարում է մի բարձրագոչ ցալտում և չարաճնի արդ նենդ հնչիւնը մեզ պարզ ասում է, թէ ալիքներից մէկը համարձակ՝ սահել, հսկել է մինչ մեր ոտները. Ռահիմն արդէն նմանցնում էր ալիքը կանանց և խիստ կասկածում թէ նոքա փարուելու և համբուրուելու բուռն տենչանք են զգում դէպի մեզ.

Նա պառկած էր կրծքով աւազի վերալ, գլուխը դէպի ծովն և խոհուն՝ զիտում էր պղտոր, մութ հեռուն, լինուած արմունկին և զլու խն ափերի մէջ տեղաւորած. Բրդոտ, ոչխարի մոթալ փափախը ծոծրակն էր ընկել և ամբողջապէս մանր ակոսած նորա լալն ճակտին ծովի թարմ քամին համբուր էր զրաշմում. Մեծ փիլխոփալու թեան մէջ էր ընկղմուած և ուշք իսկ չէր էլ գարձնում թէ ես էլ կողքից լսում եմ նորան. խօսում էր, կարծես, ծովի հետ մենակ.

—«Ճշմարիտ հաւատ ունեցող մարդը Աստծոյ արքայութեան բաժին կը պառնալ, իսկ ով որ Աստծուն և մարգարէին չէ պաշտում, լսում, Գուցէ նա հէնց ալս փրփուրի միջին... Եւ այս ջրերի արձաթփալ բծեր, գուցէ, նա էլ... ով գիտէ»:

Մասի, հզօր ճօճանքով տարածուն ծովը փալլին է տալիս. տեղ տեղ նորա վրալ արտացոլում են անփոլթ նազանքով լուսնի շեղ նետած փալլուն շողերը. Թաւարծի լեռան ծեր զազաթների իտելից արդէն լողում, ելնում է և այժմ էլ

մտախոհ իւր լուսը թափում, զեղում է ծովը, որ նորա դիմոց
հանդարտ հձնում է:

— Ուահիմ, եկ պատմիր մի բան... խնդրում եմ ծերին:

— Ե՞նչ հարկաւոր է, հարցնում է ծերը, առանց դառ-
նալու դէպի իմ կողմը:

— Ես, այնպէս... Աիրում եմ լսել քո պատմածները:

— Ամեն ինչ արդէն պատմել եմ ես քեզ... “Դորանից ա-
մելի էլ ոչինչ չդիտեմ...”

Ալդ ասելով նա ուզում էր որ ես խնդրեմ նորանից: Եւ
ես խնդրում եմ:

— Կուզես, կրպատմեմ քեզ համար մի շատ, շատ հինա-
ւուրց երգ: — Համաձայնում է Ռահիմը:

Ես կամենում եմ հին երդը լսել և նա շատ տիսուր, մե-
լամազձ ծորով, երդի ինքնուրուն անապատալին դաշնակը
պահելու մեծ աշխատանքով, աղաւազ ուու՝ ջարդվիսուր լե-
զուով պատմել է սկսում:

I.

«Դէպի լեռների բարձունքն անհուն սողում էր իժը և
պառկեց ու մնաց այստեղ նա խոնաւ կրճի մէջ մնաակ: ոլո-
րուեց, կծկուց և նայում էր ծովին:

«Անհուն եթերում, երկնքի վրալ փալում էր արեն, լեռ-
ների տապօք երկինք էր իջնում, իսկ այստեղ, ներքեւ ապա-
ռած ժալուին ալիքը զնում, զալիս էր զարնուում...»

«Եւ կրճի միջով, մութ անդունքներով, միշտ ցալտին
տալով, կատառ վտակը դուխ կոտրելով սահում էր ծովը,
մեռ սեպ քարին համբոլինք տալով:»

«Ճերմակ փրկում, քափ-քրտինք մտած, ճեղքում էր
գոսող, հինաւուրց սարս, զահաւէժ դէպ ծով, զիմում էր ա-
րագ ցակուու ազմուկով:»

«Եւ ահա լանկարծ նոյն կրճի դիրկը, որտեղ ոլորուած
է ծկուած էր իժը. երկնքից ներքեւ ընկաւ զլսիվալը բաղէն
վիրաւոր, ջարդ-ժարդ կրծքով, արիւնզանգ մարմնուլ...»

«Անդօր հառաչով նա գետին փռուեց և անոթ ու թա-
լուկ, ցասում զալորթով զարկում էր քարին, վիրաւոր կըրծ-
քով...»

«Իժը սարսափեց. սողաց խիստ արագ, հեռացաւ մի քիչ
իւր պառկած տեղից. բայց և ըմբռնեց, հասկացաւ իսկոն, որ
բազէի կեանքն երկու կամ երեք լուսէից լետու կդադրի ընդ
միշտ...»

«Մօտ սողաց կրկին դժբաղդ բազէին և ուղիղ աչքերին
նախելով անթարթ, հարցրեց փշալով:»

— «Հը», դու մեռնում ես:

— «Ալո, մեռնում եմ, ձախ տուեց բազէն, խոր հառաչ-

տալով նս փառքով անցրի իմ կեանքի օրեր... Նս զիտեմ բազգի իսկական արժէք... Աս միշտ քաջարի կուի մղեցի... Տեսալ ես անհուն եթեր երկինքը... Դու այնքան մօտկից երթէք չես կարող տեսնել ալդ երկինքը... Ալս, դու, խեղճ, թը-շուառ, դժբաղդ արարած...

— Ե՛, Բնէ բան է քո գոված, անհուն երկինքը, — զատարի, անարժէք մի տարածութիւն... Խօնզպէս կարող եմ ես այնտեղ սովոր, ինձ համար ալս տեղ չքնազ հրաշալի է... Ձերմ է ու խոնաւ...

«Ալսպէս էր իմը աղոտ բաղէին պատասխան տալիս և սրտանց իւր ներսն քամահում նորա անմիտ զառանցանք, «Ալսպէս էր խորհում. — «Թուչն թէ սովա՝ վերջը լավտնի է. ամենքը հողի բաժին կըդառնան, բոլորին էլ նոր դամբանն է սպասում...»

«Բայց անմենիր բաղէն լանկարծ թալրաաց, մի քիչ բարձրացաւ, տեղիցն ուղղուեց և անհուն թախծալից աշերով կրծի մութ, խաւար խորքը սունջ, լոիկ դիտեց, «Գորչ, սեպ ժալուերի արանքից ջուրը ծծում էր, սուզ-ւում. խեղդուկ էր սուալ, մութ կրծի ողը. խոնաւ էր հոտում, «Եւ ձայնեց բաղէն, սրտի հեծութեամբ, մի վերջին անդամ կրկին ժողուելով իւր րոլոր ոլժեր.

«Ախ, թէ կրնս ի՞ զէթ մի անգամ էլ երկինք սլանալ... Թշնամուս կրկին կըալմէի ես... կուրծքիս վէրքերին ես... իմ իսկ արիւնով՝ կիսեղդէի նորան... Օ՛, երջանկութիւն կեանքի մաքառման...

«Իսկ իժն ինքն իրեն խորհում էր կամաց. «անշուշտ երկնքում կեանքը թովիչ է, եթէ սա ալսպէս անվերջ հեծում է...»

«Եւ առաջարկեց ազատ բաղէին. «Արի դու փորձիր մօտենալ ծերապին և ժալուից դէպ վար դու քեզ վաչը ձգիր, «Գուցէ թեերդ քեզ վեր կհանեն և կապրես թերես գլթքանի մի րոպէ քո միջալարում.»

«Թալրաաց բաղէն, թուլիկ ձախն հանեց, լործուն գետ-նին սա մագլցելով, մի կերպ մօտեցաւ սեպ քարածալուին,

«Մօտեցաւ ժալուին, թեերն լարդարեց և ամբողջ կրծքով մի խոր չունչ քաշեց. աչերն պոստեց, կալծակներ ցալտեց և ծերպի ծալրից դէպի վալը սահեց,

«Եւ թշուառ բաղէն, որպէս ծանր քար, քարից քար զարկում, անդունդ էր զլորում, թեերը ջարդ դշուր, վեարթափ նղած...

«Ցործանքի ալիք նորան դրկեցին, արիւնզանդ մարմին մաքուր լուացին, փրփրադէկ ջրերի փափուկ սաւանով պատաձ մեծ ծովին տարան լանձեցին,

«Ծովի կոհակներ տխուր մռնչով շառաչով զալիս, քարից քար զարկում, սեպ սև ժալուերին լափին էին տալիս...»

Նւ թռչնի մեռած դին էլ չէր երևում ամենի ծովի անսահման-
տարածք, անջրպետի մէջ...

II.

Ակրեմի նեղ անցքում պառկած էր իժը. խորհում էր երկար-
բաղէի մահուան, ինչպէս և նորա դէպ երկինք տածած բուռն
ըղձի մասին:

«Եւ ահա նալեց այն անհուն հեռուն, որտեղ մշտապէս-
շոլում են աշեր բաղդի ցնորքով»:

— «Ի՞ալց ինչ էր տեսնում այն մեռած բաղէն այս ան-
ծալը, անհուն լուռ անապատի մէջ, ինչու անսպիսիք, ինչ-
պէս էր և նա, մեռնելու ժամին, երկինք թռչելու անմիտ-
ցանկութեալը և անհուն սիրով հոգի են մաշում. ի՞նչ որոշ,
մէկին, պարզ բան են տեսնում նոքա վերենում. թալց չէ ոք.
ես էլ կարող եմ դիտնալ իսկոյն ալդ ամեն, թռչելով երկինք,
թէն կարճ ատեն»:

«Ասաց՝ կատարեց. Օղածալ դարձած, ճիսաց դէպի վեր-
որպէս նեղ երկզ, փալլեց պապղաց արեի ոսկի շողերով ուղ-
ղուած»:

«Անվերջ սողալու համար ծնուածը՝ թռչել չէ կարող.՝
Մոռցած ալդ բանը՝ նորից ցած ընկալ քարերի վլաչ. անվաս-
պրձաւ և քթի տսկին մի կուշտ ծիծաղեց»..

— «Ա՛ թէ որտեղ է երկինք թռչելու բոլոր հրապուրը.
Բանից դուրս եկաւ ընկնելու մէջն և... Սաղրածու շպլիկ,
անմիտ թռչուններ.. Երկրին անծանօթ, նրանից ձանձրացած,
երկինք են դիմում, բարկ անսպատառմ նոր կեանք որոնում-
Դատարկութիւնն է միաւն ալդ եթերալին մեծ անապատի
սիակ ճոխ զարդը. Այստեղ լուս, որևէ որքան կամենսա,
բալց ապրուստ ու սնունդ՝ մտքով իսկ չանցնես. նոյն իսկ-
լենարան կննդանի մարմինն ալնտեղ չի գտնիլ. Էլ ինչ վի-
տոթիւն, գոռող կոտրտանք. Էլ ինչ կշարմրանք. Այն պարզ
պատճառով, որ իրենց անմիտ ըղձ ըը ծածկեն և կեանք-
կոռուին իրենց անպատրաստ լինելը քողարկեն. Շպլիկ թը-
շուններ... Բալց ալսուհետեւ նոցա խօսքերը երբէք չեն կարող
ինձ նմաններին խելքահան անեւ նո ինքս արդէն ամեն բան
գիտեմ, Երկինքը տեսալ, սեփական աշքով. Երկինք ճխացի,
ինքս չափեցի, անկումն զգացի, բալց լաւ էր, որ զեռ կենդան
մնացի. ալ միաւն կրկին՝ ողերիս մասին ունեցած նախկին
հաւատու ամրացաւ. Թող նոքա, որոնք, երկիրը սիրել չեն կա-
րող երբէք պատրանքով ապրեն.. Ես հասու եղալ բուն ճը-
մարտութեան. Եւ նոցա կոչին էլ չեմ հաւատալ Երկրի արա-
րած երկրով եմ ապրում»:

«Ոլորուեց կրկին ու կծիկ դարձաւ, կպաւ սև քարին,
շատ գոհ իրենից»:

«Ամենի ծովը նոր փալով շողաց և զիմ ալիքը զարկում
էր ափին, լավին էր տալիս».

«Նոցա բարձրագոչ, առիւծ դոռոցը զոռող բաղէի երգն
էր որոտում. ժալուերը նոցա ուժգնադին զարկից, զողում էին
սարսում. զողում էր և երկինք այդ անեղ երդից».

«Բաջերի խենդութեան փառքն ենք մնաք երգում,
«Քաջերի խենդութիւն—ահա թէ որն է կեանքի դրօն ի-
մաստութիւն։ Օ՛, անվեճեր բաղէ, թշնամու կուում արիւն-
քամ եղար... Բայց կըզալ իստու մի օր, ժամանակ և քո ջերմ
արեան ամեն մի կաթիւ, իրրե մի մի կած կեանքի խաւա-
րում բորբոք կլառուին և շատ խենդութուի, անվեճեր սրանք
սուրբ աղատութեան և հզօր լուսի անմիտ պատակավ, կալրուին
կըկիդուին».

«Ի՞նչ վեաս թէ դու մեռար, գնացիր... Բայց լանդուդն
և զօրեղ հոգով կուանուած երգերի սէջ միշտ, դու միշտ կմաս
անմահ օրինակ և աղատութեան, անաղարտ լուսի անվեճեր
կոչնակ».

«Քաջերի խենդութեան փառքն ենք մնաք երգում...»

* * *

...Լուռ է մեծ ծովի արեակ հեռութիւն, տիրամած
ալիք մաղձիկ ծփանքով ցաւտ-ցրիւ եղած դալիս են, փարուում
ափի աւաղին. ես էլ լուռ, մնջիկ բաղէի մասին հինաւուրց եր-
զը պատմու, պրծնող Ռահիմին եմ նալում. Զրի ծփանքը
լուսնի արծաթի սիրուն շողերով պճնուել է բոլոր... Սեր
կաթսան մի կողմ, եռում է կամաց».

Մի կարտառ կոհակ ափ է ցատկուում և կարծես կուուի
կանչողի ձախուլ, աղմկով խիզախ դիմում է ուղիղ Ռահիմի
զլիին:

—Ե՛, ուր ես գալիս... Դէ, կորիր, գնա, —երկիւղ աղդե-
լու ձեռքի շարժումով դիմում է նորան ծերուկ Ռահիմը և
հլու, հսաղանդ ալիքը կրկին դիմում է ծովը».

Ինձ համար իսկի՝ ճիշտ ալիքների մարմացած ողի ծեր
Ռահիմի խաղը ոչ ծիծաղելի, ոչ էլ սոսկալի չթուաց երբէք.
Ամեն ինչ չորս դին տարօրինակ—կենդան, քնքոյլ ու փա-
փուկ, փաղաքուշ է թուած. Եւ նոյն իսկ ծովը մինչ ալնչափ
ապդու խաղաղ է, հանգիստ, որ զեւ ցերեկուան տապից չը-
զովցած լեռների հսկալ դէմքերին խալցող իւր հումկու կըրծ-
քից չնչող զով հովը ծածկել, պահել է բաղմաթիւ, դաղսնի
զօրաւոր ոժեր. Եւ մոլոդ-կապտագուն երկնքի վրալ ոսկեսող
աստղերն նկարէն լժերով ինչ որ վեհագուն առեղծուած են
գրում, որ հեռու, ապագալ լալտնութեան անուշ, աղու լուսե-
րով միտք խոռվելու, հոգի թովելու գաղտնի ոլժ ունին».

Ամեն ինչ նիրհում, քնած է խաղաղ. բայց նիրհում է լարուած՝ չափազանց զգաստ, և կարծէք, թէ ահա, մի վալրկեան լեռու ողջ բնութիւնը կըճիալ, խայտալ և անուշ ու դաշնակ քաղցր մեղեղու ուժեղ ձախների կիոխութի խսկուն. Եւ ալդ ձախները կպատմեն, կասեն բնութեան անվերջ, խոր զաղտնիքները, մեր մտքի առաջ կմեկնեն, պարզեն և ապա, ինչպէս երազ-ցնորքի տեսլական կրակ, կմարեն նորան, իսկ հոգին առած, կթացնեն տանեն իրենց հետ վերև՝ անսահման անհուն մոլու-կապուա եթեր, որտեղից նորա դէմ ելնող աստղերի առկաթող չողեր՝ մի նոր լաւտնութեան նորնչափ վեհադրւն, նորասքանց երգի ձախներ կըճիւն...

8. 4.

Հայոց Ա-աշխառ պահմանը բարձր է այսօն-ը տիկիութեան և գոյաց պահմանը այս-ը զարդարութեանը ճախառացնոց և պահմանը ըստ կախառացնոց այս-ը զարդարութեանը ճախառացնու

— առաջը լացուան նշան ս օճառորչ լուրջացման ով
ու շա եւսնաք և պիտի նշանի բառ սառ քառ
— առանք ու զ խոր ւոյն կա նիւս զաւոցի
և արք պայծառ ։ 